

«Եւ տուի (Աւետարանը) Բարձրաքաչիս սուրբ ուխտին եւ սքանչելագործ սուրբ Գրիգորին, ի ձեռն սուրբ աստուածաման հայրապետին տէր Վահանայ, եւ սուրբ ընտրեալ միաբանիցն, յառաջնորդութեան սուրբ ուխտին (Բարձրաքաչի) տէր Վահանայ»:

Բարձրաքաչի վանքը գլխաւորաբար Դսեղի Մամիկոնեաններու ձեռակերտն է, որուն շինարարութիւնները կը սկսին մօտաւորապէս 1205 թուականով: Ունեցած է վանահայրեր, որոնցմէ ծանօթ է Տիրացու վարդապետ, որուն առաջնորդութեան համար տեղ մը ՈԿԵ (1216) թուականը կը տրուի իրը հնազոյն: Ասիկա տարակուսելի ընթերցուած կը նկատեմ արձանագրութեան: Հաւանաբար հնազոյն թուականը որ մեզի ծանօթ է Տիրացու վարդապետի առաջնորդութեան համար՝ 1236ն է եւ վերջինը որ ծանօթ է՝ 1250 թուականն է: Իրմէ վերջ հաւանաբար նշանակելու է Երեմիա վարդապետ եւ Յովսէփ վարդապետ, որոնց երկուքին համար ալ թուականով արձանագրութիւն կը պահուին: Իսկ Տէր Վահան մը երբեք չի յիշուիր մեզի ծանօթ Բարձրաքաչի վանքի արձանագրութեանց մէջ: Փուցէ Տէր Վահանի առաջնորդութիւնը 1236էն առաջ ստեն մը եղած ըլլայ: Վանքին մասին 1250էն վերջ թուականով արձանագրութիւններ ծանօթ չեն այժմ:

Համայն ամուսնացած էր սակաւն անժառանգ, ինչպէս որ ինքն իսկ կը վկայէ ըսելով. «Ոչ դուստր ունէի եւ ոչ որդի»: Այլուստ ալ որեւէ ծանօթութիւն չունիմ Համայի, իր ամուսնոյն, եւ մահուան մասին:

Իր հայրը կը նոյնացնեմ Մամիկոն Բ-ի հետ:

#### Դ Ո Ւ Դ Ա Տ Ի Կ Ի Ն

Յայտնի չէ թէ որո՞ւն դուստրն է: Հաղբատի մէկ արձանագրութեան մէջ «Ի Թվիս ԶԻԹ (1280) ... ես՝ Պաժած, որդի Լիպարտի եւ ամուսին իմ Դուդա, յազգէ Մամիկոնեաց ...» կը յիշուի Դուդա տիկին Մամիկոնեան: Թէ՛ Պաժած եւ թէ՛ Դուդա թաղուած կ'երեւին Հաղբատ: Պաժածի տապանադրութիւնը. «Այս է՝ հանդիստ բարեպաշտ իշխանին Պաժածին» (Յիշատ. 31): Իսկ Դուդայի դամբանագիրն է. «Այս է հանդիստ Դուդայ տիկնոջ, յազգէ Մամիկոնեաց» (Յիշատ. 32):

#### ՄԽԻԹԱՐ, ՄԱՐՏԻՐՈՍ, ՍԵԻԱԴԱ, ՌՈՒԶՈՒՔԱՆ

Այս անունները կ'երեւին Կոչիկ անապատի 1265 թուականէն արձանագրութեան մը մէջ, որ ղժարախոտաբար մասամբ եղծուած ըլլալով, անոնց կապը որոշ չէ Դսեղի Մամիկոնեաններու տոհմին հետ (Յիշատ. 7):

#### Հ Ա Մ Ա Զ Ա Ս Պ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս

Դսեղի Մամիկոնեաններէն է Յովհաննավանքի առաջնորդ Համազասպ Եպիսկոպոս Մամիկոնեանը, որուն ծնողաց մասին ղժարախոտաբար ծանօթութիւն կը պահուի: Ոչ ալ տեղեկութիւն ունինք իր կրթութեան եայլնի մասին: Զինք Յովհաննավանքի առաջնորդ կը դանենք ԶԻԸ (1279)ին: Զաքարիա Սարկաւակ կը գրէ. «Թուին ԶԻԸ. եղև Հայր Համազասպ (Այսինքն առաջնորդ Յովհաննավանքի - Յ. Ք.): Այս Համազասպ բազում արդիւնս արար, եւ բազմացոյց զգրեանս Աստուածային. որ եւ բազումք կան դեռ եւս: Սա էր յաւուրս որդոց իշխանին Քրդոյ, եւ վարէր զԱռաջնորդութիւնն մարմնաւոր իշխանութեամբ. եւ էր ինքն յազգէ Մամիկոնեից, այր փառահեղ եւ ահար-